

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(*) տարաբաղադրակի գինում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թին

ՀՐԵՏԱՐԱՆՈՒՄ Է ԼՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոներին հե-
տևեալ օրերից:

Լրագրի գիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐԻ: «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԼՅՆ
ԽՄԵՐԻՆԵՐԵՐԻ մէջ:

ԼՄԵՆԶԻՆ ՀԵՐԵՐԵՐԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցեով ТИФ-
ЛИСЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատասխան «ՕՅՅՈՐԵ» լրագրին:—Ներքին
տեսուչութիւնը, Նամակ Գերբեքչիյի, Նամակ Դու-
րուցի, Ներքին լուրեր:—Արտաքին տեսուչ-
ութիւնը, Գերբեքչիյի:—Մշակի» հեռագրները:
—Հայտարարութիւնները:—Բանասիրական
կրթական տեսական նկատողութիւններ:

ՊԱՏԱՍԽԱՆ «ՕՅՅՈՐԵ» ԼՐԱ-
ԳՐԻՆ

Կրկին ուսաց «ՕՅՅՈՐԵ» լրա-
գիրը պօղէմիկ է սկսում մեզ դէմ,
այս անգամ սովի մասին գրված

դրութիւնը ևս կան, որոնք համարեա միմեանց ե-
տևից վրա հասնելով սպառնում են զիջականի
ամբողջ տարեկան արդիւնքը փչանալուն: Յիշե՛ք
չերամի հիւանդութիւնը, յիշե՛ք խաղողի հիւան-
դութիւնը—թ ո գ ը, որ խաղողի ողկոյցները մոխրի
պէս ծածկելով այրում փչացնում է ամբողջապէս,
յիշե՛ք եղջիւրաւոր անասնոց ջարդը, որ նոյնպէս
չըջարեաբար պատահելով սպառնում է զիջական-
ների հօտերը: Սրբա արդէն մեղանում երեւցած-
ներն են, քանի այդպիսիներն էլ դեռ սպառնում
են մեզ իրենց վարակմամբ: Յիշե՛ք սորանցից՝ Ա-
մերիկայում երևացած զետախնձորի բզէզը, բզէզ-
կօյրօրացոն, որ զետախնձորի բոյսերն է փչացնում,
յիշե՛ք Ֆիլիսթինը—մի տեսակ փոքրիկ միջատ,
որ արեւմտեան Եւրօպայի խաղողի այգիներն է փե-
չացնում, յիշե՛ք վերջապէս ցորենի բզէզը, որ
Ռուսաստանի քանի մի նահանգներում երկաւով ար-
դէն քանի տարի է սկսել է ցորենի արտերը աւե-
րել:

Տէրութիւնը ամենայն անգամ, երբ մի այդպիսի
չարիք է սպառնում, ամենայն տեսակ նախազգու-
շութեան միջոցներ է սկսում գործ դնել ժողովր-
դին այդ զժառղութիւններից ազատ պահելու
համար: Տեսնում ենք որ մերիս երեւցած տարի-
ներում ամենայն տեղ կառավարութեան կարգա-
դրութեամբ մարդիկ են դուրս գալիս դաշտերը
մորելը կոտորելու համար, այդպէս էլ Ռուսաս-
տանի այն նահանգներում, ուր երևացել է ցորենի
բզէզը, ժամանակաւոր օրէնքներ են հաստատված
ժողովրդի համար՝ բզէզ հաւաքելու, կոտորելու
մասին:

Բայց պէտք է դիտենալ՝ որ այդպիսով շատ քիչ
կարելի է օգնել վտանգին, այլ որպէս զի ժողո-
վորը կատարեալ ապահովված լինէր իրեն ըս-
պառնացող զժառղութիւնների դէմ, անհրաժեշտ
հարկաւոր է, որ ինքը լաւ ուսումնասիրած լինէր
այդ բոլոր երեւոյթները, ուսումնասիրած լինէր
այդ զանազան կենդանիները—միջատները, տեղեակ
լինէր նորանց կենսի պայմաններին, որպէս զի
նոցա յայտնվելուն պէս խելօյն ճանաչէր նորանց
և զիտեմար թէ ինչ պէտք է արած, որ նորանց
յաջողաբար զարգանալուն ղէմն առնէ: Այս այս

մեր յօդուածի առիթով, միամիտ
և անգործնական համարելով այն
առաջարկութիւնը, որ մենք արել
ենք սովատանջներին օգնելու հա-
մար:

Ռուս լրագիրը ասում է մեր
մասին յայտնի առածը թէ չլսել
են զանգակի ձայն, բայց չը գի-
տեն թէ ուր է այն....)

Երևի զանգակի ձայնի ճիշդ
որոշելու շնորհը միմիայն «ՕՅՅՈՐԵ»
լրագրին է տուած վերին նախախ-
նամութեանց....

Եւ ահա նա ծիծաղում է մեր
առաջարկած բարեգործական մի-
ջոցների մասին, ծաղրում է մեր
առաջարկած քաղաքային մասնա-
ժողովը, որի անդամներ պէտք է
լինէին թէ ձայնաւորներ և թէ
քաղաքացիներից ընտրվածներ,
վերջապէս ծաղրում է մեր յօդուա-
ծում յիշված բարեգործական ըն-
կերութեան միտքը....

Իսկ նրա առաջարկութիւններն
ինչ են:

Պրագներ և աւելի ոչինչ:

Նպատակի համար մենք կամենում ենք ընթերցո-
ղաց հետ բաժանել զիջատնետեսակաւորութեան
թիւամբ այդ միջատների վերաբերութեամբ մեր
ունեցած տեղեկութիւնը՝ ուսն աղբիւրներից քա-
ղելով: Մենք կը սկսենք ցորենի բզէզից, որ սարսա-
փի մէջ է դրել ամբողջ Ռուսաստանը և փոքր առ
փոքր մօտենում է և մեր երկրի սահմաններին:

Ա.

Ցորենի բզէզը երևացել է Ռուսաստանում սրա-
նից 20—25 տարի առաջ, բայց մինչ 1870 թիւը
նորա վերա առանձին ուշադրութիւն չէին դարձ-
րած. այդ թիւից հետո՞ք բզէզի քանակութիւնը
սաստկացաւ, այնպէս որ իր վրա դարձրուց ընդ
հանուր ուշադրութիւնը թէ կառավարութեան, թէ
ուսումնական ընկերութեանց և թէ մասնաւոր
անձանց: 1878 թիւին բզէզը բռնած էր խերսօնի
Պոտովկի, Խարկովի, Եկատերինօպոլի և սահմա-
նակից նահանգները: Նոյն թիւում բզէզը հասել
էր և Դոնսկի նահանգին և ինչպէս «КАВКАЗ» լրա-
գիրը հաղորդեց, այս 1879 թիւին երևացել է ար-
դէն և Կովկասեան սարերի միւս ստորոտում, այն
է Կուրանի վիճակում: Դրանց բազմութեան վրա
մի գաղափար կաղնելու համար բաւական է յիշել
որ միայն խերսօնի նահանգում 1876 թիւին հաւա-
քած էին մօտ 200,000 զարնցա (որ կանէ մօտ
15,000 պոլո) և միայն Ողեսի գաւառումը նոյն
թիւին հաւաքված էր մօտ 50,000 զարնցա:

Հացահատիկները փչացնող բզէզի մի քանի
տեսակներ կան, այն տեսակը որ առաւել տարած-
ված է առաւել վնասակարն է՝ կոչվում է Ani-
soplia austriaca, ուսմանը նորան անուանում են
«КУЗЬКА», թէ և այս կոչմամբ նրանք հասկանում են
ընդհանրապէս ցորեն ուսող բզէզների բոլոր տե-
սակները:

Բզէզների (Anisoplia) ցեղի յատկանիշները սրբա
են, նորանց բնիկներ ինքը յօդաւոր են, վերջաւորվում
են գնդաձեղի նման դնդով, որը արական սե-
ւիւնը մի փոքր մեծ է լինում: Գլխի ծածկովը
տարածվում է դէպի առաջ կնճիթի կամ քթի
ձևով, նիզանում է հետզհետէ, իսկ ծայրում մի
փոքր լայնանում և դէպի վերն է թիկնվում: Նո-

«Խորա համար, ասում է լրա-
գիրը, անհրաժեշտ է ապահովել
ժողովրդական հայթայթումն սո-
վից տանջվող վիճակների մէջ, այն
չափով, որ համապատասխան լի-
նէր յիշեալ վիճակների աղգաբնա-
կութեան թիւին: Իսկ դորա հա-
մար հարկաւոր են նախ և առաջ
մեծ կապիտալներ, հացը այնտեղ
առնելու համար, որտեղ նա էժան
է և այնտեղ բերելու համար, որ-
տեղ նրա մէջ պահանջ կայ, և
երկրորդ՝ կօնսորի հաստատ կազ-
մակերպութիւն այն գործողների
վրա հսկելու համար, որոնց յանձն-
ված է հողալ ժողովրդական հայ-
թայթման մասին»:

Եւ դ տեսակ ճոճուող ֆրագնե-
րից ի՞նչ կարելի է հասկանալ....

Գոնէ, փառք Լստուծու, որ
վերջը ամեն բանի վրա իր օղմ-
պիական բարձրութեանց նայող լը-
րագիրը ասում է պարզ կերպով
թէ ինչ է ուզում:

«Միմիայն զէմնովոյի հիմնար-
կութիւնների գոյութիւնը կարող

լանց բերանը վնասված է 6 սուր ատամներով:
Մէջքը մի փոքր կորնթաղ է, մէջ տեղումաւերի
լայն, քան առաջի և ետեի ծայրերում: Եղջերա-
թների (накрылья) ծայրերը կողոպտան են, փոքր
չեն ծածկում: Նորանց ոտները ուժեղ են, թա-
թիկները հինգ անդամակաւորներ են: Anisoplia
austriaca իր ցեղի բզէզների ամենամեծ տեսակ-
ներիցն է, նորա մարմնի երկայնութիւնը 12 1/2
միլի 16 միլիմետրի է հասնում, այն է մօտ 1/3
վերջօղի: Էջը աւելի լայն է արուից, երկու սեւերի
մարմինը մութ կանաչ գոյնի է, մի փոքր փայ-
լուն: Գլխի, մէջքի վրա փոքրիկ կէտեր են երե-
ւում փոսերի ձևով: Եղջերաթները լերկ են, կար-
մրադեղին գոյնով և բաւականին սաստիկ փայ-
լում են: Մարմնի ներքին կողմը թանձր ծածկած
է սպիտակագորշ աղուամազներով:

Բզէզների թևաւորվելը և զետնի երես գուրս
զալը համարեա մի և նոյն միջոցում է կատար-
վում բոլոր բզէզ բռնած տեղերքում, այդ լինում
է մայիսի վերջին կամ յունիսի սկզբում, եղանակի
չորութեանը նայելով: Առհասարակ ուր բզէզը
շատ ուշ է երևում և այն ուղղակի հացարոյսերի
վրա, այլ չէ թէ վայրի խոտերի, պէտք է ընդու-
նել որ նա ուրիշ տեղից է եկել, մնացեալ ղէպ-
քերում պէտք է ընդունել նոյն տեղումը գուրս
եկած երկու կամ չորս տարի առաջ ածած սերմերից:

Պաճուճապատից (ЕУКОЛКА) բզէզի դուրս գալու
ժամանակամիջոցը տեսնում է մինչ երկու շաբաթ
և որովհետեւ այդ ժամանակ համարը դեռ ծաղիկ
վիճակում է լինում, ուստի բզէզը մնում
է այդ սէղի վրա, որի հատիկների հիւթով
էլ երևի կերակրվում է, այնու հետև հնուհնում
է համարի և յետոյ էլ ցորենի վրա՝ հատիկների
լքջ լինուն նայելով: Բզէզի տեղափոխութիւնը
մօրեխի պէս հեռաւոր տեղեր թռչելով չէ կա-
տարվում, այլ փոքր առ փոքր մի արտից միւսը
յառաջանալով:

Բզէզը դարեան պաճուճապատից դուրս գալուց
թող և սպիտակագոյն է լինում և մինչև ամրա-
նալը մի առ ժամանակ մնում է գետնի երեսին
անշարժ, իսկ յետոյ սկսվում է նորա ամենաաշ-
խոյժ գործունէութիւնը՝ այն է լափելով սպառել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒԴԱՏՆԵՍԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք բոլորս դեռ շատ լաւ յիշում ենք այն յու-
սահատ սարաւի, որ քանի ամիս առաջ տիրա-
պետած էր մեր զիջատնետեսակներին այս անցեալ
ամառ մեղանում երեւցած մորեխի և մկան պատ-
ճառաւ, որոց հետևանքը մանաւանդ այժմ ղգալի
է դարձած խաբանչիւր դատակարգի անձանց հա-
մար: Ինչպէս յայտնի է մօրեխի մեծամեծ վնաս-
ները պատճառեց Գանձակի, Թիֆլիսի և
մասամբ Երևանի նահանգներում, փչացնելով ամե-
նայն տեղ հացի արտերի մեծ մասը: Մուրը ևս իր
կողմանէ ոչ փոքր վնաս պատճառեց Երևանէտա-
պոյի նահանգում նոյն հացի արտերին: Մեզ յայտնի
են թէ որչափ տէրութիւնը հօգ էր տանում այդ
չարիքների աւելն առնելու համար, ինչպիսի միջոց-
ներ սկսեց գործ դնել, որպէս զի պաշտպանէր
զիջացիների ցանքերը փչանալուց, զիտե՛ք որ
ժողովուրդը ևս իր կողմանէ մասնակցում էր այդ
չարատիւնեանց ամենայն յօժարութեամբ, որովհե-
տեւ պարզ տեսնում էր իրեն սպառնացած զժառղ-
ութիւնը—սովը: Բայց ցաւալին այն է, որ միայն
վնասող երևալուց յետոյ են սկսում ամենքը մտա-
ծել, խօսել և զրել՝ նորա վրա, իսկ մինչ այն ոչ
մէք նորա մասին չէ մտածում: Մօրեխը ի վաղուց
իտե՛ք ժամանակ առ ժամանակ անապին բազմու-
թեամբ մեր արտերի վրա երևալով՝ փչացնում էր
մարտերը և պատճառում էր թանգութիւն և սով
մարտերը: Դժողովուրդը սովորել էր ձեռքերը ծալած
նայել այդ պատահարներից իրեն Աստուածանից
ուղարկած պատիժ իրենց մեղաց համար և չը գի-
տէր ոչինչ արմատական միջոցներ նորանցից նա-
խագոյնաւոր և նորանց ղէմ մարտելու համար:
Մօրեխի և մկան պէս ուրիշ բազմաթիւ զժառղ-

էր մասամբ բաւականացուցիչ կերպով լուծել խնդիրը», վերջացում է ռուս թերթը:

Մենք կը համարձակվենք հարցնել ռուս լրագրից, ինչի Ռուսաստանում, որտեղ զէմս տվօն երկան, նրանք անգոր են սովի երեւալուն և օրից օր սաստկանալուն առաջն առնել:

Այդ այն պատճառով է որ զէմս տվօն թէ հացի թանգութեան և թէ մանաւանդ սովի յայտնվելու ժամանակ կարող է նոյնքան և ոչ սուելի անել բան թէ մասնաւոր ինքիցիաւորից գրգռված բարեգործութիւնը, այսինքն միմիայն ժամանակաւորապէս դեղ անել և ոչ թէ արմատական դարման անել ցաւին ու հիմնական վերանորոգութիւն գործել մի հասարակութեան ամբողջ, ինքն ըստ ինքեան սխալ տնտեսական կազմակերպութեան մէջ:

Ահասարակ որ սով չը լինի մի հասարակութեան մէջ, պէտք է ոչ թէ սովի յայտնվելուն պէս սովին առաջն առնել, այլ պէտք է առաջուց այնպէս անել որ սով չը կարողանայ յայտնվել, եթէ հացի պաշարը մի օր թանգանայ: Իսկ երբ արդէն յայտնվեցաւ, եթէ դրուստն ուղում էք իմանալ, բոլոր միջոցները պալի աւտիւ, առ երես միջոցներ են:

Արշական (աղմինխտրատիւ)

միջոցներով թէ կուզ զէմս տվօն կամ ուրիշը լինի առաջարկված վարչական հիմնարկութիւնը, հացի թանգութեան և սովի պէս ցաւի դէմ, որուն իր խոր արմատներ մի երկրի է կոնսմիական կազմակերպութեան մէջ—ոչինչ, կամ նոյնքան կարելի է անել, որքան և բոլոր միւս ժամանակաւոր միջոցներով:

Իսկ տնտեսական մշտական ամբողջ կարգը փոխելու համար, հարկաւոր է որ արդիւն աւելնի անձնական շահասիրութեան, որի տեսակներն են՝ չարչիութիւն, ափերիստութիւն, հարստահարութիւն և այլն....

Դորա համար հարկաւոր է վտանգի յայտնվելուց շատ առաջ գործել, գրգռելով երկրի արդիւնաբերող ոյժերը ինքնուրոյն կերպով գործելու, զանազան հարստահարող ոյժերի անտանելի և կործանիչ լուծից ազատվելու համար:

Այդ մենք մեր կարողութեան չափ միշտ արել ենք, տարիներով բարոգելով արդիւնաբերող ընկերութիւններ, փոխատու ընկերութիւններ, գիւղական կրեստ.... Արդեօք եւրօպական Ռուսաստանի զէմս տվօնները լուրջ կերպով այդ մասին որ և է ժամանակ հոգացել են.... Այն նրանք միջոցներ պաշտօնական, վարչական

հիմնարկութիւններ, ժողովրդի կարիքը չը ճանաչող կազմակերպութիւններ....

Իսկ ումից են բաղկացած զէմս տվօնները,—նոյն իսկ ժողովրդի ներկայացուցիչները:

Որտեղ նոյն իսկ ժողովուրդը իր տնտեսական ամենաանհրաժեշտ պահանջների մէջ չունի ոչինչ ինքիցիաւոր, այնտեղ ոչինչ չի օգնի մի հիմնարկութիւն, որ կազմակերպված է զէպի իր ամենաանհրաժեշտ շահերը անհոգ մնացող նոյն ժողովրդի ընտրեալները:

Իսկ թէ մենք տարիներով բարոգել ենք կամ չենք բարոգել այն ձևի տնտեսական հիմնարկութիւնների իրագործելը, որոնց վերելիչները,—այդ մասին թող «Օժօր» լրագիրը ներդրիւն քաշի թերթիւ «Մշակի» անցեալ տարիների համարները:

«Օժօր» լրագրի յօդուածը դիպչում էր թէ մեզ և թէ «Труд. Вѣстн.» լրագրին: Այդ վերջինի պատասխանից բաղում ենք հետեւեալ ուշադրութեան արժանի տողերը:

«Ասենք թէ զէմս տվօն բոլոր բաղմաթիւ գործողութիւնները աջողութեամբ են կատարվում,—բայց ի՞նչ պէտք է անենք մինչև որ այդ հիմնարկութիւնը կը մոցնի իր

մեզ մօտ.... Այդպէս կուլթիւնը թող կորչի, թող աղաղակի օրական օգնութեան մասին, թող նա այս օր ոչինչ չը ստանայ, չունենայ մի կտոր հաց անգամ,—մինչև որ «Օժօր» լրագրի ջանքերով մենք կունենանք մեր երկրում զէմս տվօնի հիմնարկութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆԻՒՅ

Յունվարի 14-ին

Դերբէնդի թէ ընդ և թէ օտարական հայրիկանայք կարելի է երկու հակապատկեր դասերի բաժանել. առաջին դասը կազմող զլիսաւորապէս տէրութեան պաշտօնատարների կանայք են, իսկ երկրորդ ամենամեծ դասը հասարակ ժողովրդական: Առաջինները փոքր ի շատէ կը թված լինելով, վայելում են կեանքի այն ամենայն զուարճութիւնները, որ կարելի է, գտնել այսպիսի մի կըզգիացեալ քաղաքի մէջ, ինչպէս Դերբէնդն է: Նրանց առաջ բաց է կուրը, թատրօնը, գիմնասիւնը, քաղաքային պարտիզի գրասանքները, և այլն և այլն. մինչդեռ հասարակութեան մեծամասնութիւնը զուրկ է այս ամենից: Նա նահապետական ամբթխածութեամբ փակված է դեռ իր տանը, նրա միակ գրաստեղծին ազգակցի տունն է, կամ շատ շատ այգիները. այդ անձուկ չըլանի մէջ ի հարկէ ինչ պէտք է լինի նրա մօտաւոր կարողութեան անունը, եթէ ոչ հայկական գէշ սովորութիւնները՝ բամբասանք, ծաղր, զրպարտութիւն և այլն: Այսպիսի անմիթխար գրութեան մէջ եթէ կը նրա մի օրինակ կեանքի մէջ մի փոփոխութիւն ձգող երևոյթ, այդ երբեմն երբեմն սիրողներ ներկայացումներն են, որոնք դժբաղդաբար երկու երեք տարին մի անգամ հազու են զուրկ զալու:

Իր, ճակնդղելի (բանջար կամ ճարխալ, сѣнокосилка) վրա յայտնված առանձին առանձին թրթրութիւններ ու բզէզներ և վերջապէս դաշտային նահանգներում ցորենի ցանքերի վրա յայտնված ցորենի-բզէզը, Այդ տեսակ երևոյթներ կը լինեն վրում են զանազան կողմերում և ընդհանրապէս այնտեղ, ուր զլիսաւորապէս մի օր և ինչ բոլոր մշակութեամբ են զբաղվում, նշանաւոր տարածութիւնների վրա:

Այս այս իրողութիւնների յայտնվելու ռուս դիւտնտեսագէտներին մտածել տուաւ, որ ցորենի բզէզի դէմ մաքառելու համար զլիսաւոր պայմանը պէտք է այն լինի, որ նոքա անբարեպաշտ պայմանների մէջ զնվին իրանց լաւողապէս գործակալու վերաբերութեամբ, այսինքն նրան պէտք է զրկել իրենց բնութեան համապատասխան կերակրից: Բայց թէ արանից չը պէտք է եղրակացնել որ հարկաւոր է ցորենի մշակութիւնից բոլորովին ձեռք վեր առնել, երբէք ոչ, որ այն հարկաւոր է ցանքերը փոփոխել, և չէ թշուրեւակ տարեցտարի մի և նոյն բոյսը մշակել: Anisoplia austriaca բզէզի կերպարանափոխութիւնները պատմուց, ասացինք որ սերմերի զուրս եկած որդիներ ամբողջ երկրորդ տարի շուրա հետեւեալ տարին բզէզի փոխվելով սկսում են ուտել արտերը, ուտել և ցորեն ցանքի պէտք է հրաժարվել միայն այն տարին, երբ Anisoplia austriaca բզէզի վիճակի մէջ էր լինել: այդ ժամանակ ցորենի փոխարէն կարելի է ուրիշ ցորենի վիճակում կը լինի կարելի է նորէն ցորենի մշակութեան վերադառնալ: Ահասարակ ցորենի բզէզի դէմ մաքառելու ամենայնաւոր միջոցը յայտնված է ցանքի պարտ ու պատշաճ փոփոխութեան մէջ, որ երկրագործութեան համար իր ընդ օգուտները ևս ունի:

Ս. Մ.

իր ճանապարհին հանդիպած կերը՝ առաջ սէզը, իսկ յետոյ և հացահատիկները: Եթէ բզէզի յայտնվածն ենթադրված հացարդայների հատիկը պընդած է լինում և բզէզի ատամներին տեղի չէ տալիս, այն ժամանակ նա հասկի մէջ քրքրելով դեպի թափում հատիկները: Anisoplia կերակրվում է բոլոր հասկաւոր հացահատիկներով, բացի եգիպտացորենից, վարսակից և կորեկից, չէ ուտում և իւղաւոր բոյսերը, արմատապտուղները, սեռա ցորենը, պատիճաւոր բոյսերը: Հացարդայների վրա յարձակվելով՝ բզէզը ծծում է ձևակերպվող հատիկի հիւթը:

Բզէզները սննդվելուց յետոյ զուգաւորվում են և դրանից յետոյ արուն սատկում է, իսկ էզը փորելով գետնը մտնում է այնտեղ, սերմեր ածում ու նոյնպէս սատկում, Հացի բզէզների սերմերը կողպած և կամ երկայնաձև են լինում, սպիտակ գոյնով և հասնում են մինչ կորեկի կամ կանեփի հատիկի մեծութեան: Սերմերը առաւել լաւ զարգանում են չափաւոր խոնավ հողի մէջ, իսկ չոր գետնում նոքա փչանում են: Ածած սերմերից աշնան մօտեցրում դուրս են գալիս որդիք (личинки): Որդիների մարմինը 12 օղակներից է բաղկացած լինում:

Հացակեր բզէզների որդիներ սերմերից դուրս գալուց քիչ չարժեքան են լինում, բայց յետոյ խիստ արագաշարժ են դառնում, հեշտութեամբ և շուտով փորելով փխրուն հողի մէջն են մտնում և լաւ սողում են: Հողի մէջ մտնելով որդը իր համար մի խոր է չինում, որի մէջ և կամաւորաձև թեքուելով գետնիցում է, այդ խորի չըլապտող հողն էլ պնդելով՝ կոկոնի պէս մի բան է կազմում: Հողի յատկութեան, տարալի պատճառներով, եղանակի վիճակին նայած՝ որդիներ խորվում են հողի մէջ քիչ կամ շատ. փխրուն հողի մէջ նոքա հեշտութեամբ են խորվում և աւելի խոր էլ են խորվում, քան կոշտ հողի մէջ, երաշտութեան ժամանակ. նոյնպէս աշնան և ձմեռը որդիներ աւելի խոր են լինում, քան գարնան և ամառը խոնավ եղանակում: Գորակեր բզէզի որդը մնում է հողի մէջ բոյսերի փառածով կերակրվելով, այդպէս անց է կացնում ամբողջ երկ-

րորդ տարին և միայն հետեւեալ տարվայ գարնան փոխվում է պաճուճապատի, որը սկզբում սպիտակագոյն է լինում, իսկ ծերութեան հասնելուց գորշ-դեղին է դառնում: Այդ վիճակի մէջ բզէզը կենում է երկու կամ երեք շաբաթ՝ և այնուհետեւ բզէզի է փոխվում: Բզէզի փոխվելուց մի առ ժամանակ էլ հենց հողի մէջն է մնում, բայց և վերջապէս երես դուրս գալուց էլ մի քանի օր մնում է հանգիստ, կարծես իր ոյժը ժողովելու համար:

Բ.

Anisoplia austriaca բզէզի հասուցած չարթը յայտնվելուց և նրա կեանքի նկարագրութիւնը փոքր ինչ մտնեալուց յետոյ մի կարճաւոք կերպով էլ ցոյց տանք թէ Ռուսաստանում ինչ միջոցներ են գործ դնում այդ բզէզից ազատվելու համար: Այնտեղ բոլորն էլ այն կարծիքի են, սկզբում, որ պէտք է աշխատել բզէզների ցեղը քննել նորանց կոտորելով և այդ նպատակի համար շատ տեսակ բզէզ որսալու մեքենաներ հնարվեցան անցեալ 1878 թուականում մէկը միւսից աւել կամ պակաս անյարմար: Մինչև այժմ այդ մեքենաներից չը տեսնվեցաւ այն օգուտը որ սպասվում էր նրանցից, որովհետեւ շատ անգամ նրանցով աւելի վնասում էին արտերին, քան թէ որքան բզէզ էին որսում: Այնու ամենայնիւ դրանց վերջնական արդիւնքը կերակայ առաջիկայ 1880 թուականին, երբ բզէզների թիւը միլիարդներով է սպասվում: Կարծիք չը կայ որ բացի մեքենայով որսալուց ձեռով էլ հաւանում էին բզէզները, բայց շատ պարզ հասկանալի է, որ այդ միջոցներով ոչինչ չէ կարելի յառաջանել միլիոնաւոր բզէզների դէմ: Բզէզներին այդպէս մեքենայաւոր կոտորելու համար հնարած միջոցների հետ մի ուրիշ խնդիր էլ ծագեցաւ նրանց բնականաւոր կոտորելու համար: Պրօֆեսոր Մեյնիկով հնարք և միջոց սկսեց որոնել ցորենի բզէզների վրա օտարաբոյս-միջատների (паразиты) պատուաստելով՝ հիւանդութիւն գցել նրանց մէջ, որով ինքեանը կոտորուէին առանց մի օր և ինչ աշխատութեան մարդու կողմանէ, և թէն նա իր

փորձերով ապացուցից օր այդ բանը հնարաւոր է, բայց թէ դեռ ևս դրանից էլ մի այնպէս արդիւնք չէ երևացել և նոյնպէս ապագան կարող է ցոյց տալ այդ կղանակի օգուտակար կամ անօգուտ լինելու: Այս յիշատ միջոցներից փոքր ինչ առաւել յուսալի է այն կղանակը, որով առաջարկում են բզէզները կոտորել սերմի և որդի գրութեան միջոցներում, այդ բանին հասնել կարելի է հողը պատշաճաւոր կերպով հերկելով և բազմիցս նորան չըլելով:

Գ.

Բզէզների դէմ մաքառելու միջոցների վրա մեծ տածելով, ռուս գիւղատնտեսագէտները հասան ի վերջոյ մի խիստ կարեւոր եղրակացութեան, որ բոլորովին ուրիշ պայմանների մէջ դրաւ բզէզների ցեղը սպառելու խնդիրը և որի վրա մենք կը հրաւիրենք մեր գիւղատնտեսների խորին ուշադրութիւնը:

Ամբողջ դարիկից յետոյ փորձերը ապացուցել են որ երկար միջոցով մի և նոյն տեղում և նշանաւոր տարածութեան վրա մի և նոյն տեսակ բոյսի մշակութիւնը բարենպաստում է այն տեսակ միջատների զարգացման, որոց համար նոյն բոյսը կերակուր է կազմում: Սխալ կը լինի ենթադրել թէ միջոցը քաղցածութիւնից ստիպված իր բնութեան համապատասխան կերակուր չը գտնելով կը սկսէր ուրիշ բոյսերով կերակրվել. միջոցը, ինչպէս և ամենայն մի կենդանի, անբնական կերակրով յաջողապէս զարգանալ չէ կարող: Իրաւ է նա մի առ ժամանակ կը շարունակէ իր պոյութիւնը, լարելով իր ոյժերը գոյութեան համար կուլ մէջ, բայց այդ կուլը նորա համար իզուր չի անցնի. նա կը տկարանայ, կը նիւարանայ և վերջ ի վերջոյ կը չըբանայ: Թէ շատ բոյսերի յատկ են առանձին առանձին օտարաբոյս-միջատներ—գորան կարող են ապացուց լինել Ամերիկայում գետնախնձորի վրա երևացած բզէզ-կօրօրագոն, արևմտեան Եւրօպայում խաղողի տունկերի վրա յայտնված ֆիլոփտերները, Ռուսաստանի շատ կողմերում վուշի (կոտաւահատ, лещ), արևածագ-